

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԸՆՏ-ՄԱ-ԱՊՁԲ 01/19**

ք. Գյումրի

«11» փետրվարի 2019 թ.

«Ընտանիք» ՊՈԱԿ-ը ի դեմս տնօրեն՝ Ա. Մինասյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և Ա/Ձ Մարգարիտ Արծրունյանը, ի դեմս Մարգարիտ Արծրունյանի, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով, Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված հետևյալ հոդվածներով ապրանքները, (այսուհետ ապրանք)՝ /Թղթե կամ ստվարաթղթե գրանցամատյաններ, հաշվառման գրքեր, արագակարեր ձևաթղթեր և տպագիր գրենական պիտույքների այլ պարագաներ/, /Ձանազան գրասենյակային սարքավորումներ և նյութեր/, /Կերպարվեստի նյութեր/, /Կահավորանք/, /Ներկեր, լաքեր և մածուծաններ /մաստիկաներ/, /Անվտանգության որոշակի աստիճան ունեցող տպագիր նյութեր/, /Բացիկներ, շնորհավորական բացիկներ և այլ տպագիր նյութեր/, /անձնական խնամքի պարագաներ/, /համակարգիչներին առնչվող սարքավորումներ/, /հատուկ հագուստ և պարագաներ/, /լուսավորման սարքեր և էլեկտրական լամպեր/ իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել Ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են Z աշխատանքային օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք՝

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու Պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու Պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,
2.1.8 Ձևնել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

- 2.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:
- 2.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:
- 2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:
- 2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:
- 2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

- 2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված Ապրանքը:
- 2.3.2 Գնորդից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:
- 2.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայմանագիրը:
- 2.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:
- 2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

- 2.4.1 Գնորդին հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:
- 2.4.2 Ապահովել Ապրանքի մատակարարումը Պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:
- 2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:
- 2.4.5 Գնորդին հանձնել Պայմանագրով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ «Օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:
- 2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:
- 2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից Պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:
- 2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:
- 2.4.9 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:
- 2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:
- 2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

- 3.1 Պայմանագրի գինը կազմում է 426 160 /չորս հարյուր քսանվեց հազար հարյուր վաթսուս/ ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է Պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված չեն ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից Ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված Ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները¹:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված Ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (հավելված N 4): ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով Ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 4):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները:

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված Ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված Ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով²:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

¹ Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնվելիք ապրանքը չի հանդիսանում հիմնական միջոց: Իսկ եթե գնվելիք ապրանքը հանդիսանում է հիմնական միջոց, ապա երաշխիքային ժամկետը չպետք է պակաս լինի 365 օրացուցային օրից:

² Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հարկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում Պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը³:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ Պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ Պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով

սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով Պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը: Արգելվում է Պայմանագրում, իսկ եթե Պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ Պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող Ապրանքի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե Պայմանագիրն իրականացվում է գործակալության Պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

8.7 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել Ապրանքի օգտագործման պահանջը:

³ Պերական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:

8.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.9 Կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով Պայմանագիրը չի կարող փոփոխվել կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը և Պայմանագրի N 1, N 2, N 3 N4 N 4.1 հավելվածները, որոնք համարվում են Պայմանագրի անբաժանելի մաս, կազմված են 24 էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է ՀՀ օրենքները և համապատասխան իրավական ակտերը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ

ՎԱՃԱՌՈՂ

«Ընտանիք» ՄՊՍԿ ՊՈԱԿ

Ա/Ձ Մարգարիտ Արծրունյան

ք. Գյումրի, «Անի» թաղ. 11փ 5/2
ՀՎՀՀ 05504412
Հ/Հ 900018005554
Երևանի թիվ 1 ՏԳԲ
Ա. Մի ն ա ս յ ա ն

ք. Գյումրի Կրուպակայայի փ 93
ՀՎՀՀ 87321645
Հ/Հ 1930045842260100
«Կոնվերսանկ» ՓԲԸ
Մ. Ար ծ ր ու ն յ ա ն



(ստորագրություն)
Կ.Տ.



(ստորագրություն)
Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի

հրավերի նախատեսված չափաբանի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	տեխնիկական բնութագիրը	Չափման միավորը	միավոր գինը /ՀՀ դրամ	ընդհանուր գինը /ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
								հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը
22800000 Թղթե կամ ստվարաթղթե գրանցամատյաններ, հաշվառման գրքեր, արագակարեր ձևաթղթեր և տպագիր գրենական պիտույքների այլ պարագաներ										
1.	22851200	Թղթապանակ A4 /ոեգիստոր, 27X31սմ/	Թղթապանակ ոեգիստոր A4 ֆորմատի, երկօղակային, կողային հաստությունը 80 մմ, կազմը ստվարաթղթից, կազմի հաստությունը 2մմ, գույնը սև	հատ	800	8000	10	Ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	10	11.03.19թ
2.	22811150	Նոթատետր զսպանակով A5 ձևաչափի	Չափսերը: A5, 128x203 մմ, 56գր/քմ, 70 թերթ, նշումներկատարելու համար	հատ	220	4400	20	Ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	20	11.03.19թ
3.	22811130	Նոտայի տետր A4 ձևաչափ /16 թերթ/	Նոտայի տետր A4 ձևաչափի 16 թերթ	հատ	250	3750	15	Ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	15	11.03.19թ
4.	22811130	Տետր 96 թերթ	Տետր ընդհանուր A5 ֆորմատի, 96թերթանի, գծավոր, առանց պարույրի	հատ	250	2500	10	Ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	10	11.03.19թ
5.	22851200	Թղթապանակ ֆայլերով 60 էջ	Թղթապանակ ցուցադրական, A4 ֆորմատի, 60էջ, թափանցիկ ֆայլերով	հատ	600	3600	6	Ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	6	11.03.19թ

6.	22810000	Դասալսումների մատյան	Մատյանը նախատեսված է ուսումնական հաստատության տնօրենի, փոխտնօրենների և այլ պաշտոնյաների կողմից ուսուցիչների մոտ անցկացվող դասալսումները գրանցելու համար	հատ	2000	4000	2	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	2	11.03.19թ
7.	22810000	Ուսումնական հաստատության մանկավարժական խորհրդի արձանագրությունների մատյան	Ուսումնական հաստատության մանկավարժական խորհրդի արձանագրությունների մատյան	հատ	2500	2500	1	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	1	11.03.19թ
8.	22851200	Թղթապանակ կոճգամով A4 ձևաչափ	Ֆորմատը A4, թղթապանակ-ծրար կոճգամով, թափանցիկ	հատ	70	2170	31	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	31	11.03.19թ
9.	22810000	Մտից գրությունների մատյան	Մատյան կազմակերպություն մտնող փաստաթղթերի գրանցման համար: A4 ձևաչափի սովորաբար թղթե կազմով, միագույն տպագրությամբ /սև/ 45-50 էջ/	հատ	1200	1200	1	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	1	11.03.19թ
10.	22810000	Ելից գրությունների մատյան	Մատյան կազմակերպությունից դուրս եկող փաստաթղթերի գրանցման համար: A4 ձևաչափի սովորաբար թղթե կազմով, միագույն տպագրությամբ /սև/ 45-50 էջ/	հատ	1200	1200	1	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	1	11.03.19թ
Ընդամենը						33320				
30190000 Ձանազան գրասենյակային սարքավորումներ և նյութեր										
11.	30197624	Միլիմետրա թուղթ 878մմ	70գ/Մա, նարնջագույն գծերով: 1քմ-ի	մետր	200	1000	5	ք. Գյումրի Անի թ.	5	11.03.19թ

			համար գծերի միջև նվազագույն հեռավորությունը՝ 1մմ, առավելագույնը՝ 5սմ: լայնությունը 90սմ					11փ 5/2		
12.	30197644	Թուղթ կրկնօրինակ ման A4 ձևաչափ	Գունավոր կալկա: Նախատեսված է արտատպելու համար	հատ	10	200	20	Ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	20	11.03.19թ
13.	30192770	Ծեփ չափածրարված /12 գույն/	Պլաստիլին չափածրարված: Տուփի մեջ 12 գույն	տուփ	400	3200	8	Ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	8	11.03.19թ
14.	30192114	Թանաք /30մլ/	Թանաք կապույտ կնիքի, բարձիկի համար 30մլ	հատ	280	560	2	Ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	2	11.03.19թ
15.	30192111	Բարձիկ թանաքի	Կնիքի բարձիկ մետաղական կամ պլաստիկե կաղապարով	հատ	500	1000	2	Ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	2	11.03.19թ
16.	30197220	Ամրակ /100հատ/ 30մմ	Ամրակ մետաղական, տուփի մեջ 100 հատ, պատրաստված բարձրորակ մետաղական լարից, 30մմ	տուփ	150	1500	10	Ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	10	11.03.19թ
17.	30197622	Թուղթ A4 ձևաչափ ուլտրասպիտակ	Թուղթ A4 ֆորմատի: Նախատեսված է գրելու, տպագրելու և գրասենյակային աշխատանքների համար: Քաշը 80 գր/մք, տուփի մեջ 500 հատ, ուլտրասպիտակ	տուփ	2000	18000	9	Ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	9	11.03.19թ
18.	30199230	Ծրար 115*225մմ	Ծրար 115x225մմ, սունձվող շերտով: Նախատեսված է տարբեր փաստաթղթերի և նամակների փոստային փոխանցումների համար:	հատ	10	1000	100	Ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	100	11.03.19թ

19.	30199232	Ծրար A4 ձևաչափ	Ծրար A4, սոսնձվող շերտով: Նախա տեսված է տար բեր փաստա թղթերի և նամակների փոստային փոխանցում ների համար	հատ	40	400	10	Ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	10	11.03.19թ
20.	30199230	Ծրար 120*165մմ	Ծրար 120X165մմ սոսնձվող շերտով: Նախա տեսված է տար բեր փաստա թղթերի և նամակների փոստային փոխան ցումների համար	հատ	10	500	50	Ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	50	11.03.19թ
21.	30192930	Քողարկիչ	Ուղղիչ գրիչ, օգտագործվում է փոքր սխալները ուղղելու համար 10մլ	հատ	220	1100	5	Ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	5	11.03.19թ
22.	30197231	Ֆայլ 70մկր	Թափանցիկ պոլիպրոպիլեն ային ֆայլեր. կողային անցքերով 70մկր A4 ֆորմատի	հատ	15	4500	300	Ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	300	11.03.19թ
23.	30197321	Կարիչ /ստեպլեր N24/6 HD 45	Կարիչ N24/6 HD-45: Գրասենյակային և կարիչ 20-ից մինչև 30 թերթ մետաղալարե կապերով ամրացնելու համար	հատ	1200	6000	5	Ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	5	11.03.19թ
24.	30197111	Կարիչի միջուկ /N 24/6	Կարիչի ասեղ, № 24/6, պատրաստված բարձրորակ պողպատից, փաթեթա վորված 1000 հատով ստվարաթղթե տուփերում	տուփ	130	1950	15	Ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	15	11.03.19թ

25.	30197331	Դակիչ	Մետաղական դակիչ, 2 անցք բացելու հնարավորությամբ 20-30էջ դակելու հնարավորությամբ	հատ	1150	2300	2	Ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	2	11.03.19թ
26.	30197340	Ապակարիչ	Մետաղական աշխատանքային մասով և պլաստմասե բռնակով գործիք՝ նախատեսված է կարված թղթերը առանձնացնելու համար:	հատ	180	540	3	Ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	3	11.03.19թ
27.	30141200	Հաշվիչ	Հաշվիչ LCD թվային էկրան, 12 նիշ, կրկնակի գրո, հիշողության ֆունկցիա, տոկոս, քառակուսի արմատ	հատ	3400	6800	2	Ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	2	11.03.19թ
28.	30199400	Նշումների թուղթ /76.2մմ-76.2մմ/ կպչուն	Կպչուն թերթիկներ նշումների համար: Կպչուն, գունավոր, չափսերը 76,2մմ - 76,2մմ, 100թերթ	հատ	170	850	5	Ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	5	11.03.19թ
29.	30199400	Նշումների թուղթ/38.1մմ-50.8մմ /կպչուն	Կպչուն, գունավոր, թերթիկներ նշումների համար: Չափսերը 38.1մմ - 50,8մմ, 100թերթ	հատ	130	650	5	Ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	5	11.03.19թ
30.	30199400	Նշումների թուղթ /50.8մմ-50.8մմ /կպչուն	Կպչուն, գունավոր, թերթիկներ նշումների համար: Չափսերը 50,8մմ - 50,8մմ, 100թերթ	հատ	140	700	5	Ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	5	11.03.19թ
31.	30190000	Քվիլինգի թուղթ /0.4մմ լայն. 120գր.մ2 խտությամբ/	Քվիլինգի թուղթ /0.4մմ լայն. 120գր.մ2 խտությամբ/ 50*0,9սմ 100	տուփ	1500	7500	5	Ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	5	11.03.19թ

		50*0,9սմ 100 հատ	հատ							
32.	30192740	Թուղթ գունավոր A4 ձևաչափ/10հ ատ/	Գունավոր թուղթ A4 Ֆորմատի: Նախատեսված է ձեռքի աշխատանքներ կատարելու համար /10հատ/ 70գ/քմ	տուփ	250	2000	8	Ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	8	11.03.19թ
33.	30192220	Ժապավեն կաշուն /սկոչ 19մմ*36մմ*40 մկմ/	Սկոչ փոքր 19մմ*36*40մկմ գրասենյակա յին աշխատանք ների համար: Սոսնձային շերտի հաստությունը՝ 0,018-0,030 մմ կամ 0,030- 0,060 մմ: ԳՕՍՍ 20477- 86	հատ	80	400	5	Ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	5	11.03.19թ
34.	30192232	Կաշուն ժապավեն թղթից /20մմ/	Կաշուն ժապավեն թղթե հիմքի վրա 0.020*50մ	հատ	230	460	2	Ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	2	11.03.19թ
35.	30192123	Ներկամա տիտ /Ֆլումաստեր /12 գոյն//	Գունավոր ֆլումաստերներ նկարչության համար, փակվում են օդափոխվող գլխիկով, տուփի մեջ 12 հատ, տարբեր գոյների	տուփ	550	6600	12	Ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	12	11.03.19թ
36.	30194320	Թուղթ գծագրույթ յան /10հատ/	Սպիտակ A4 Ֆորմատի, նախատեսված գծագրման և էպիզների համար, 210X297մմ տուփի մեջ 10հատ, չշտամբավոր ված 200գ/Մա	տուփ	220	2640	12	Ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	12	11.03.19թ
37.	30192700	Կարկին	Պլասմասե տուփով հավաքածու, որում կա մետաղական կարկին, կարկինի	տուփ	1400	4200	3	Ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	3	11.03.19թ

			գլխիկին համապատաս խան մատիտ, համապատաս խան տուփով, քանոն, չափակարկին:							
38.	30192121	Գունավոր գրիչ գնդիկավոր, 12գույն	Գունավոր գնդիկավոր գրիչներ: Տուփի մեջ 12 հատ	տուփ	1200	2400	2	Ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	2	11.03.19թ
39.	30192770	Ծեփ քանդակի	Փափուկ ծեփ, շագանակա գույն, նախատեսված քանդակի համար	կգ	1800	7200	4	Ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	4	11.03.19թ
40.	30197120	Կոճգամ /50հատ/	Կոճգամ- մեխիկներ գունավոր պլաստիկե գլխիկներով, տուփի մեջ 50հատ	տուփ	250	2250	9	Ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	9	11.03.19թ
41.	30192210	Ժապավեն կաշուն 48մմ*36մմ*4 0մկմ	Լայն սկոչ 48մմ*36*40մկմ գրասենյակայի ն և փաթեթավոր ման աշխատանք ների համար	հատ	250	1750	7	Ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	7	11.03.19թ
42.	30192220	Ժապավեն կաշուն /սկոչ 19մմ*36մմ*40 մկմ/	Լայն սկոչ 19մմ*36*40մկմ, գրասենյակա յին և փաթեթավոր ման աշխատանք ների համար	հատ	80	400	5	Ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	5	11.03.19թ
43.	30197638	Վատման /սպիտակ/ A1	Վատման A1 ֆորմատի, սպիտակ, 200գր/մԱ, չափսը 594x841մմ	հատ	150	5700	38	Ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	38	11.03.19թ
44.	30192131	Մատիտ Սև HB	Մատիտ սև, տեսակը HB փայտե, վեցանկյուն կամ կլոր	հատ	80	12080	151	Ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	151	11.03.19թ
45.	30192100	Ռետին	Բոլոր տիպի գրաֆիտով գրվածքները ջնջելու համար:	հատ	80	8080	101	Ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	101	11.03.19թ
46.	30192133	Սրիչ	Մետաղյա սրիչ մատիտ սրելու համար	հատ	80	3760	47	Ք. Գյումրի Անի թ.	47	11.03.19թ

								11փ 5/2		
47.	30192710	Սոսինձ չոր 22գ	Սոսինձ-մատիտ չոր, տարողությունը 22գր, սոսնձում է թուղթ, ստվարաթուղթ, նկարներ	հատ	450	9450	21	Ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	21	11.03.19թ
48.	30197231	Ֆայլ 40մկր	Թափանցիկ պոլիմերային թաղանթ. կողային անցքերով 40մկր, արագակա րերին ամրացնելու հնարավորությ յամբ A4 ձևաչափի թղթերի համար	հատ	10	2100	210	Ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	210	11.03.19թ
49.	30192121	Գրիչ կապույտ գնդիկավոր /Փ-0.7մմ/	Կապույտ գնդիկավոր գրիչ, թափանցիկ պլաստմասե իրանով 0,7մմ	հատ	40	1200	30	Ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	30	11.03.19թ
50.	30197638	Վատման գունավոր B1 ձևաչափ /70սմx100սմ /	Վատման գունավոր B1 ֆորմատի, 220- 240 գր/մԱ, չափսը 70x100սմ	հատ	300	8100	27	Ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	27	11.03.19թ
51.	30197511	Ստվարաթու ղթ տարբեր գույների /70սմ*100սմ /	1,8մմ հաստությամբ հաստ ստվարաթուղթ՝ B1 ձևաչափի	հատ	700	47600	68	Ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	68	11.03.19թ
52.	30192121	Գրիչ գնդիկավոր 6 գույն, միջուկը փայլուն	Գունավոր փայլուն գրիչների հավաքածու՝ 6 հատ 0,7մմ, գելային միջուկով	տուփ	500	2500	5	Ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	5	11.03.19թ
53.	30192740	Թուղթ A4 գունավոր/25 Օհատ/	Թուղթ A4 ֆորմատի: Նախատեսված է գրելու, տպագրելու և գրասենյակա յին աշխատանք ների համար: Քաշը 110 գր/մք, տուփի մեջ 250 հատ, գունավոր	տուփ	2850	2850	1	Ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	1	11.03.19թ
54.	30197622	Թուղթ A4	Թուղթ A4	տուփ	1700	11900	7	Ք.	7	11.03.19թ

		սպիտակ снегuroчка /500հատ/	Ֆորմատի: Նախատեսված էգրելու, տպագրելուևգր ասենյակայինա շխատանքների համար: Քաշը 80 գր/մք, տուփիմեջ 500 հատ,					Գյումրի Անի թ. 11փ 5/2		
55.	30197646	Թուղթ A3 սպիտակ Double A /500հատ/	Թուղթ A3 Ֆորմատի: Նախատեսված էգրելու, տպագրելու և գրասենյակայի նաշխատանքնե րիհամար: Քաշը 80 գր/մք, տուփիմեջ 500 հատ, սպիտակ	տուփ	3500	7000	2	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	2	11.03.19թ
56.	30192125	Գծանշիչ մարկեր /6 գույն/	Մարկեր տարբեր գույների, նախատեսված CD, DVD սկավառակներ ի համար 6գույն ֆետրից կամ այլ ծակոտկեն նյութից տափակ ծայրոցով	տուփ	1500	4500	3	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	3	11.03.19թ
Ընդամենը							217370			
37820000 Կերպարվեստի նյութեր										
57.	37821100	Վրձին N 1 ջրաներկի	Վրձին N 1 ջրաներկի	հատ	180	1800	10	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/4	10	11.03.19թ
58.	37821100	Վրձին N2 ջրաներկի	Վրձին N2 ջրաներկի	հատ	220	2200	10	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/5	10	11.03.19թ
59.	37821100	Վրձին N3 ջրաներկի	Վրձին N3 ջրաներկի	հատ	260	2600	10	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/6	10	11.03.19թ
60.	37821100	Վրձին N5 ջրաներկի	Վրձին N5 ջրաներկի	հատ	400	4000	10	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/7	10	11.03.19թ
61.	37821100	Վրձին N8 ջրաներկի	Վրձին N8 ջրաներկի	հատ	1000	10000	10	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/8	10	11.03.19թ

62.	37821100	Վրձին N10 ջրաներկի	Վրձին N10 ջրաներկի	հատ	1500	15000	10	Ք. Գյումրի Անի թ. 11փ 5/9	10	11.03.19թ
63.	37821100	Վրձին N6 բնական մազերով	Վրձին N6 բնական մազերով	հատ	930	4650	5	Ք. Գյումրի Անի թ. 11փ 5/10	5	11.03.19թ
64.	37821100	Վրձին N8 բնական մազերով	Վրձին N8 բնական մազերով	հատ	1000	5000	5	Ք. Գյումրի Անի թ. 11փ 5/11	5	11.03.19թ
65.	37821240	Ալբոմ նկարչական /40 թերթ/	Նախատես վաճ նկարելու համար, 40թերթ, սպիտակ գույն, հաստ կազմով: Թղթի խտությունը ոչ պակաս 80գ/քմ	հատ	350	4200	12	Ք. Գյումրի Անի թ. 11փ 5/12	12	11.03.19թ
66.	37821130	Մատիտ գունավոր /12գույն/	Գունավոր մատիտ տուփի մեջ՝ 12 գույն, սրված	տուփ	400	4800	12	Ք. Գյումրի Անի թ. 11փ 5/13	12	11.03.19թ
Ընդամենը						54250				
39200000 Կահավորանք										
67.	39221350	Պլաստիկե ջրաման /200գր/	Պլաստիկե ջրաման /200գր/	հատ	50	1500	30	Ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	30	11.03.19թ
68.	39241210	Մկրատ գրասենյակ ային 13սմ	Մկրատ պատրաստված բարձրորակ պողպատից, չժանգոտվող, կլորացված ծայրերով, չափսը 13սմ:	հատ	500	11500	23	Ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	23	11.03.19թ
